Ի՞նչ է ամսական բաժանորդագրությունը

- Ամսական բաժանորդագրությունների հետ Դուք վճարում եք Ձեր սակագնային պլանին համապատասխան ամսավճար, որը, կախված նրանից, թե որ սակագնային պլանն եք ընտրել՝ Դելֆինը, Պանտերան թե Թիթեռը, ամբողջությամբ վերածվում է ներառված րոպեների, SMS-ների և ՄԲ-երի կամ գումարի, որը կարող եք օգտագործել Ձեր ցանկությամբ:
- Ամսավճարում ներառված րոպեները, ՄԲ-երը կամ SMS-ները Ձեր հաշվին փոխանցվում են յուրաքանչյուր ամսվա 1-ից, սակայն Դուք կարող եք դրանք օգտագործել եթե գտնվում եք ակտիվ շրջանում և ակտիվ շրջանին հաջորդող 20 օրերի ընթացքում
- Տվյալ ամսվա ընթացքում չօգտագործված ներառված գումարը, րոպեները, SMS-ները և MB-երը, հաջորդ ամիս չեն փոխանցվում:
- Ucom ամսական բաժանորդագրության ծառայության սակագնային պլաններում ներառված րոպեները, SMS-ները և ՄԲ-երը չեն կարող օգտագործվել ռոմինգում: Ռոմինգում գտնվելիս գանձումը կատարվում է ըստ ռոմինգի սակագների:
- Դուք հնարավորություն ունեք նաև Ձեր հաշվի ներքո ընդգրկել մեկից ավելի ամսական բաժանորդագրությամբ համարներ, որոնք կարող են ունենալ տարբեր սակագնային պլաններ, սակայն մեկ ընդհանուր բացասական հաշվեկշռի սահմանաչափ:
- Եթե ամսվա ընթացքում օգտագործում եք Ucom-ի այլ ծառայություններ կամ ավելին քան ամսավճարում ներառված րոպեները, ՄԲ-երը կամ SMS-ները, գանձումը կատարվում է Ձեր հաշվեկշռից՝ համաձայն Ձեր սակագնային պլանի: Դելֆինի, Պանտերայի և Թիթեռի հետ Դուք ունեք նաև բացասական հաշվեկշռի հնարավորություն, որի շնորհիվ կարող եք շարունակել օգտվել Ucom-ի ծառայություններից: Բացասական հաշվեկշռի չափը սահմանվում է համաձայն Ձեր ընտրած սակագնային պլանի. որքան մեծ է սակագնային պլանի ամսավճարը, այնքան մեծ է բացասական հաշվեկշռի չափը: Եթե սակագնային պլանով նախատեսված բացասական հաշվեկշիռը Ձեզ չի բավարարում, 3 ամիս Ucom-ի բաժանորդ լինելուց հետո կարող եք դիմել այն վերանայելու համար՝ լրացնելով համապատասխան դիմում ցանկացած Ucom խանութում: Ucom-ն իրավունք ունի մերժելու Ձեր բացասական հաշվեկշռի վերանայման պահանջը՝ իր ողջամիտ հայեցողությամբ, եթե Դուք չեք բավարարում Ucom-ի կողմից սահմանված վճարունակության պահանջներին: Անհրաժեշտության դեպքում Դուք

կարող եք նաև նվազեցնել Ձեր սակագնային պլանով սահմանված բացասական հաշվեկշռի սահմանաչափը մինչև 500 դրամի՝ զանգահարելով 555 Ձեր Ucom հեռախոսահամարից: Սահմանաչափը կարող եք նվազեցնել, եթե օգտվել եք հեռախոս ամսական բաժանորդագրությամբ առաջակից և բաժանորդ մնալու Ձեր պարտավորությունն ավարտվել է: Նշված պայմանները չեն վերաբերում Ucom Բացառիկ ամսական բաժանորդագրության բաժանորդներին, ուստի նրանք կարող են ցանկացած պահի նվազեցնել իրենց բացասական հաշվեկշռի սահմանաչափնը՝ զանգահարելով 555 կամ այցելելով Ucom խանութ: Բացասական հաշվեկշռի սահմանաչափը նվազեցնելու հնարավորությունը չի գործում Արծիվ ամսական բաժանորդագրության բաժանորդների համար:

- Բացասական հաշվեկշռի սահմանաչափը գերազանցելու դեպքում հնարավոր կլինի օգտվել միայն Ձեր սակագնային պլանում ներառված Ucom ցանցի ներսում զանգահարելու րոպեներից, բջջային ինտերնետից և SMS-ներից: Մնացած ծառայություններից կամ ամսական ներառումներից (այդ թվում՝ Ձեր սակագնային պլանում ներառված և չօգտագործված ցանցից դուրս կամ արտերկիր զանգահարելու րոպեներից) օգտվելու համար անհրաժեշտ կլինի մարել ամսավճարի պարտքը, եթե առկա է, և վերալիցքավորել հաշիվը:
- Որպես Ucom Ամսական բաժանորդագրությունից օգտվող բաժանորդ, Դուք կարող եք իրականացնել չընդհատվող սեսիա(ներ) (զանգ, SMS, GPRS): Ձեզ անհարմարություն չպատճառելու նկատառումով, անգամ եթե նման սեսիայի ժամանակ սպառել եք գումարային սահմանաչափը, Ucom-ը չի ընդհատի Ձեզ մատուցվող ծառայությունը, և գումարային սահմանաչափը գերազանցող պարտքի համար գանձումը կիրականացվի ավելի ուշ Ձեր հաշվից: Նկատի ունեցեք, որ Դուք պատասխանատվություն եք կրում առաջացած բոլոր պարտքերի վճարման համար:
- Յուրաքանչյուր ամիս Ձեզ կներկայացվի հաշիվ՝ տվյալ ամսվա ամսավճարի և նախորդ ամսվա ընթացքում օգտագործած այն ծառայությունների համար (եթե առկա են), որոնց գանձումը կատարվել է բացասական հաշվեկշռից: Ամսավճարն անհրաժեշտ է վճարել, եթե անգամ ծառայությունից չեք օգտվել, օրինակ երկրից բացակայելու պատճառով :Եթե ցանկանում եք շարունակել օգտվել ծառայությունից, ապա մինչև ակտիվ շրջանին հաջորդող ամսվա 20-ը ամսավճարի հետ միասին անհրաժեշտ է վճարել նաև նախորդ ամսվա բացասական հաշվեկշիռը: Նշված ժամանակահատվածում վճարում չկատարելու դեպքում Դուք կանցնեք պասիվ շրջան (այն տևում է ակտիվ շրջանին

հաջորդող ամսվա 20-ից մինչև վերջինիս հաջորդող ամսվա ավարտը), որի ընթացքում կարող եք ստանալ միայն զանգեր, SMS և MMS: Անկախ նրանից, որ պասիվ շրջանում Դուք զանգահարելու, SMS կամ այլ տվյալներ փոխանցելու հնարավորություն չունեք, հիշե՛ք, որ պասիվ շրջանի համար ևս պետք է վճարեք ամսավճար: Պասիվ շրջանի ավարտից հետո, նշված բոլոր վճարումները չկատարելու դեպքում Ձեզ մատուցվող ծառայությունները (մուտքային և ելքային զանգ, մուտքային և ելքային SMS, տվյալների փոխանցում) կկասեցվեն, սակայն Դուք կունենաք ևս մեկ ամիս ժամանակ, որի ընթացքում Ձեզ հնարավորություն կընձեռվի վճարել կուտակված պարտքը և վերաակտիվացնել ծառայությունները: Ձեզնից նաև կգանձվի պարտքի ուշ վճարման տույժ:

- Դելֆին, Թիթեռ, Պանտերա 4000 և բարձր սակագնային պլանների բաժանորդները 12 և ավելի ամիս Ucom-ի հավատարիմ բաժանորդ լինելու համար ամեն ամիս կստանան 60 անվճար րոպե տեղական այլ ցանցերի բաժանորդներին զանգելու համար: Ucom-ի ամսական բաժանորդները համարվում են հավատարիմ, եթե նրանք առնվազն 12 ամիս Թիթեռ, Դելֆին կամ Պանտերա ամսական բաժանորդագրության սակագնային պլաններից որևէ մեկի բաժանորդ են, ամբողջությամբ և առանց ուշացումների վճարել են բոլոր ամսավճարները և չունեն ընթացիկ պարտավորություններ: